

ԱՌԱԿ.

Մ Ա Ն Կ Ի Կ Ե Ի Թ Ր Թ Ո Ւ Ր

Մասնիչ մարդուն բազմը երբեք չի յաջողիր .
Մասնիչը ցած մարդ է նաեւ նոցա աչքին ,
Որ երբ կարօտ են՝ սուտը մեղք չեն համարիր .
Մասնիչն է միշտ ամենէն մօտը վրտանգին :

Թրթուրը գեղացիին աղաչեց որ թող տայ իրեն
Պարտէզը մըտնէ գարնան , ու ամառը հոն անցընէ .
« Խօսք կուտամ , ըսաւ անոր , որ վրնաս մը չըլլար ինձմէն .
« Պըտուղի ես չեմ գըպչիր , տերեւները լըգեմ՝ կօգտէ ,
« Եւ միայն ան տերեւներն որ թոռմելու են ըսկըսած : »

Գեղացին մոմըտաց , — « Է՞ր չէ՞ ասեմ խեղճին , ասաց .
« Թրթուրն ինչքան բըռնէ տեղ ,
« Ինձ չըլինիր տեղըս նեղ .

« Թող գայ խեղճը հանգիստ ապրի պարտէ՛զըս .

« Վընաս ալ տայ՝ որքան լինի վընասըս .

« Շատ շատ կըրծէ՛ երկու երեք չորս տերեւ . . . »

Տըւաւ հրաման , ելաւ ծառին նա վերեւ : —

ձիւղի մը տակ քաշուեցաւ ,

Հանգըստութիւնը գըտաւ ,

Կերածը քիչ , գըլուխը տինձ ,

Ձայնը ձուռը չէր ելլեր հիւս : —

Ատենն եկաւ , ոսկեղօծեց արեւ ծառեր ծաղկըներ ,

Պարտեզին մէջ ձայն ձրգեցին ամէն տեսակ թըռչուններ ,

Սաթի նըման դեղին սիրուն ու կըլոր

Արեւուն մէջը եփեցան տանձ խընձոր :

Մանկիկ մը կար հոն , աչքը միշտ էր ծառին .

Հարիւրաւոր խընձորներէն զարնուեցաւ նա մէկին :

Բայց ինչ ընէր , ինչպէս ելլէր ծառէն վեր .

Այն հաստ ծառը թօթվելու ալ ոյժ չունէր .

Վերջապէս չէր գիտեր ինչպէս այն խընձորը ձեռք ձրգէ .

Ո՛վ մանկիկին գողութեանը մէջ օգնէր նէ աղէկ է . —

Պարտեզին հիւրը ,

Թրթուրը :

« Ա՛ տըղայ ,

« Գիտես ի՛նչ կայ ,

Ըսաւ տըղուն մեր թրթուրը .

« Խընձորենոյն վըրայէն

« Վաղը բոլոր խնձորները

« Պիտի քաղեն փըրցընեն .

« Այգ խնձորն ալ՝ ոչ քեզ կիյնայ անշուշտ եւ ոչ իմ բերին .

« Ձայն փըրցընեն իմ բանս ըլլայ . բայց կը հանես ինձ բաժին :

« Եթէ կուգես դուն իմ բաժնէս առ տասն անգամ աւելին .

« Ինձի փոքրիկ կըտոր մ՝ ալ տաս՝ կընամ կըրծելոյ՛ տարին : »

Մանկիկին խելքը շուտով պառկեցաւ,
Սիրով թըրթուրին բաժին խոստացաւ,
Թըրթուրը սողաց՝ խընձորին հասաւ,
Ու բոլոր ուժովն աշխատիլ սկըսաւ:

Երեք ըռպէէն

Խնձորը փրթաւ կոթէն,

Բայց նա ինչ վաստրկեցաւ:

Խնձորը ընկաւ չընկաւ,

Տըղան վրայ վազեց առաւ,

Կուտով կըճեպովը խաճաւ կերաւ:

Թըրթուրը խընձորին հետ վար իջաւ՝ բաժին ուզեց,
Բայց տըղան զինքը մէկէն ոտքին տակը տըրորեց:

Եւ այսպէս ոչ խընձորը

Մընաց եւ ոչ թըրթուրը:

ՔՈՒՂՈՎ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ.

Առ Տ. Յ. Մ. — Յունուարի հանելուկին ձեր տը-
լած լուծումը ճարտար է, բայց եւ ըստ ձեր
խոստովանութեանը՝ չկրնար այն հանելուկին
ամէն խօսքերը լուծել: — Եւ որովհետեւ մեր
փետրուարի Թերթով տուած լուծումը լաւ չէք
հասկացած դուք եւ ձեր ընկերուծիւնը, ինչ-
պէս որ կըսէք, ահա ըստ ձեր խնդրանաց ա-
նոր մեկնութիւնը տամք, հանելուկը տող առ
տող դնելով ու մեկնութիւնը տակը:

„Նա հինգ ոտքով է ուժեղ կենդանի,

„Որ վեցօրեից մէջ չըզրտանի.

Կիսէն, այսինքն ջորին (գաթըր) բառը հինգ
գրով կձեւանայ. ջորին վեցօրեայ արարչագործու-
թեան ժամանակ ստեղծուած չլինելը յայտնի է:

„Երբ երկու ոտիցը վերայ կանգնի,

„Իւր ձայնեղ ուժեղ հայրը կըլինի.

Երբ կիսէշ բառին երկու գրերը միայն առ-
նումք — է ու Շ, — կենէն է՞ն ձայնեղ եւ ուժեղ
կենդանին՝ որ ջորւոյն հայրն է:

„Իսկ երբ իւր երեք ոտքովը շըջի,

„Նա այն բախտաւոր մարդուն նմանի

„Որ դըրկեց զորդին սրա հօրն ետեւէն

„Եւ հօրմէն առաջ՝ բազ գրտաւ ճամբէն:

Երբ իւր երեք ոտքովը շըջի ըսելը կնշա-
նակէ, երբ կիսէշ բառին երեք մնացած գրերն
առնումք, այսինքն Կիս, կլինի յատուկ անուն,
եւ է հայրն Սաւուղայ՝ Իսրայելացւոց առաջին
Թագաւորին: Սուրբ գրոց պատմութիւնը գիտցողը
կհասկընայ որ Կիս՝ օր մը իւր էշերը կորսնցընելով
դրկեց զորդին որ երթայ փնտռէ գտնէ. բայց
որդին էշը չգտած՝ Թագ գտաւ ճամբէն, վասն
զի Սամուէլ մարգարէն օժեց զնա Թագաւոր Իս-
րայելի:

Յուսամ որ այս համառօտ մեկնութեամբ Յու-
նուարի հանելուկը լաւ հասկընաք Թէ՝ դուք, Թէ
ձեր ուսումնասէր ընկերութիւնը եւ Թէ Աղաւ-
նւոյն ուրիշ ընթերցողքը:

Առ Տ. Պ. Ա. — Թէ եւ զձեզ անձամբ ճանչնա-
լու պատիւը չունիմք, բայց շնորհակալ եմք
ձեր սիրալիր ու պատուաւոր խօսքերուն:

Առշակայ Ողբերգութիւնը (ուսկից 5 օրի-
նակ կուզէք) կգտնուի օրագրոյս ամէն գոր-
ծակալաց քով, որոց անուանքը տպուած են
Աղանւոյս կողքին վրայ: